

## Ա. Զ. Պ.

1947 Յունուարէն սկսեալ, ՍիՌը բոլորած իր քսանամեակը, կը մտնէ նոր շրջանի մը մէջ: Նոր կ'ըսենք, վասն զի կը զգանք թէ մարդկային այս երկրորդ աղէտէն յետոյ, աշխարհը իր նոր սեռուումները պիտի ունենայ, յեղաշրջման ենթարկելով անզամ մը նս աւանդական քմբուումներն ու կարգերը: Ինչ որ ալ ըլլայ սակայն վաղուան աշխարհին կերպարանքը, Եկեղեցին սահմանուած է մեծ դերի մը, այս է հաւատքը բոլոր անոնց՝ որոնք վաղուան աշխարհը խաղաղ ու գեղեցիկ տեսնել կ'ուզեն:

Մարդկային քաղաքակրթութիւնը նոր փուլի մը մէջ մտնելու կը պատրաստուի, և անոր վաղուան գործօնները աւելի քան երբեք հոգեկան կը թուին ըլլալ:

ՍիՌն յետ այսու պիտի սկսի հրատարակուիլ ամէն ամիս, նախապատերազմեան շրջանի ծաւալով և բովանդակութեամբ: Վստահ ենք թէ թերթիս պատուական աշխատակիցներն ու ընթերցողները՝ նոր և աւելի ջերմ զգացումով պիտի դիմաւորեն ՍիՌը, որ իբրև հանդիսարան մեր ժողովուրդի սրտին, մտքին և աւանդութեան, այսինքն մեր կրօնին, Եկեղեցիին, և մեր անցեալ ու ներկայ փառքերուն և արժէքներուն, իր միակ զոհացումը կը փնտռէ Հայաստանեայց Եկեղեցւոյ զաւակներու սիրոյն և հետաքրքրութեանը մէջ: Վասն զի Հայ ժողովուրդը Հայ է կրօնքով, իր ազգային աւանդութիւններով, իր առտնին նուիրականութիւններով և իր Մայրենի լեզուով որ զանձարանն ու պահպանը եղած է այս բոլորին:

Հոս անհրաժեշտ կը նկատենք յայտարարելու, թէ ՍիՌի տարեկանը յետ այսու պիտի ըլլայ 10 Շիլին փոխան 6 Շիլինի: Կ'ըսենք ժամանակաւոր այս պզտիկ յաւելումը, նկատի ունենալով միայն թուղթի գինը:

**Ս. Ա. Թ. ՈՌՈՒՅՍ ՏՊԱՐԱՆԻՆ  
ԼՈՅՍ ՏԵՍԱՆ**

ՍՐՈՑ ԹԱՐԳՄԱՆՑԱՅ ԵՐԶԱՆԱՌԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ, ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 2

**ՕՐՆ ՕՐԵՐՈՒՆ**

ԽՈՐՀՈՒՐԴ

(ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԿՆ)

ԵՆԵՔ ՊԱՏԿԵՐ ԵՒ ՄԵԿ ՊԱՏԳԱՍ

**Յ. ՕՇԱԿԱՆ**

ԵՐԱՆՍԱԳԷՄ

ՏՊԱՐԱՆ ՍՐՐՈՑ ՅԱԿՈՒԲԵԱՆՑ

1947

Գին՝ 15 Պ. Գահեկան, Արսասահման 20 Պ. Գ.

Էջ 81

**ՄԱՂԹԱՆՔ ՎԱՍՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ**

Ն ԵՒ

**ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱԶԳԻՍ**

Գին՝ 3 Պ. Գահեկան

Էջ 14

"**SION**," an Armenian Monthly of Religion, Literature and Philology  
Printed in  
JERUSALEM — PALESTINE